

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն»  
ՈՒՎԿ Փակ Բաժնետիրական  
Ընկերություն

30 հունիսի 2010թ.

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՈւՎԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնվել է 2009թ. հունիսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Կազմակերպությունը գրանցվել է 2009թ. հունիսի 16-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից խորհրդի թիվ 182 Ա որոշմամբ, թիվ 26 գրանցման վկայականով:

Կազմակերպությունը ստեղծվել է ՀՀ հիփոթեքային շուկայի զարգացմանն օժանդակելու նպատակով, որն իրականացվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման միջոցով:

Կազմակերպության գրասենյակը գտնվում է Երևանում: Գրասենյակի տարածքը Կազմակերպությանը անհատույց ժամանակավոր օգրագործման է տրամադրվել Կազմակերպության միակ բաժնետեր ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6:

Սույն թվականի հունիսի 15-ից Կազմակերպությունը վարձակալել է նոր գրասենյակ հետևյալ հասցեում՝ Հանրապետության 22-7

Հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպության աշխատողների միջին թվաքանակը կազմել է 9 մարդ:

## 2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 2.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ): Ֆինանսական հաշվետվությունները ներառում են Կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 2010թ. հունվարի 01-ից հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի համար:

### 2.2 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն դեպի Կազմակերպություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

### ***Տոկոսային եկամուտներ և ծախսեր***

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

## **2.3 Հարկում**

Շահույթի գծով շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Շահութահարկին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցվում է:

## **2.4 Դրամական միջոցների համարժեքներ**

Դրամական միջոցների համարժեքները բաղկացած են ՀՀ ԿԲ-ում և այլ բանկերում պահվող միջոցներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակահատվածում:

## **2.5 Ֆինանսական գործիքներ**

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Կազմակերպության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական գործիքներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական ակտիվների նման դասակարգումը կատարվում է սկզբնական ճանաչման պահին՝ Կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրենց իրական արժեքներով, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- փոխառությունների և դեբիտորական պարտքերի, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ակզբնական ճանաչումից հետո Կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունները չափում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ

- ֆինանսական պարտավորությունների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այսպիսի պարտավորությունը պետք է չափվեն իրական արժեքով;
- ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա, կամ երբ կիրառելի է շարունակվող ներգրավվածության մոտեցումը:

## 2.6 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Կազմակերպությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորուստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառու կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա

դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Կազմակերպությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար գեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Կազմակերպությունը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

## 2.7 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- կազմակերպությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- կազմակերպությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ համարվում կամ լրացել է դրա վաղեմության ժամկետը:

## 2.8 Հիմնական միջոցներ

Կազմակերպությունը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ հավանական է, որ

- այդ ակտիվներին վերագրելի տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և
- այդ ակտիվները ունեն արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել:

Կազմակերպության հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչվում են իրենց սկզբնական արժեքներով (ինքնարժեքներով): Ակտիվների ինքնարժեքները ընդգրկում են այդ ակտիվների ձեռքբերման գները, ներկրման տուրքերը, հարկերը, տեղակայման ծախսումները և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն կազմակերպության վերադարձման, և ակտիվները իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսումներ:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը

- շենքեր, շինություններ և փոխանցվող հարմարանքներ 20 տարի
- հաշվողական և համակարգչային տեխնիկա 1 տարի
- այլ հիմնական միջոցներ 5 տարի
- մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ 1 տարի
- ոչ նյութական ակտիվներ 10 տարի

Վարձակալված հիմնական միջոցի վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային մեթոդի հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահությամբ:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, եթե առկա են արժեզրկման հատկանիշներ:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի պետք է ստուգվի անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվի արժեզրկված լինելը՝ դրա հաշվեկշռային արժեքը համեմատելով փոխհատուցվող գումարի հետ:

## **Բաժնետիրական կապիտալ**

### *Բաժնետիրական կապիտալ*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Համաձայն գործող կանոնադրության, Կազմակերպությունը արտոնյալ բաժնետոմսեր չի կարող թողարկել: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

### *Շահաբաժիններ*

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

## **2.9 Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

## **3 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

### *Ներդրումային արժեթղթերի դասակարգում*

Կազմակերպության ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ պետական պարտատոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը դասակարգում է արժեթղթերը որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

### *Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ*

Կազմակերպությունն փոխկապակցված կողմերի հետ գործառնությունները իրականացնում է շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Կազմակերպությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են

այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

**Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ**

Կազմակերպությունը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Կազմակերպությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

**Չարկային օրենսդրություն**

Ղեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

**4 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր**

Հազար ՀՀ դրամ	01.04.10-30.06.10թթ.	01.01.10-30.06.10թթ.
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	92,072	146,424
Մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթեր	50,405	82,555
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	29,005	69,920
<b>Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ</b>	<b>171,482</b>	<b>298,899</b>

Հազար ՀՀ դրամ	01.04.10-30.06.10թթ.	01.01.10-30.06.10թթ.
ՀՀ կառավարությունից ներգրաված միջոցներ	76,323	124,302
<b>Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր</b>	<b>76,323</b>	<b>124,302</b>

**5 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր**

Հազար ՀՀ դրամ	01.04.10-30.06.10թթ.	01.01.10-30.06.10թթ.
---------------	----------------------	----------------------

Բանկային և դեպո հաշիվների սպասարկման վճարներ	4	24
<b>Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր</b>	<b>4</b>	<b>24</b>

## 6 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.10- 30.06.10թթ.	01.01.10- 30.06.10թթ.
Աշխատավարձ	13,978	23,435
Ուսուցման ծախսեր	72	72
Սոցիալական ապահովագրության վճարներ	1,033	1,853
<b>Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր</b>	<b>15,083</b>	<b>25,360</b>

## 7 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	01.04.10- 30.06.10թթ.	01.01.10- 30.06.10թթ.
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	54	73
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	1,339	2,649
Աուդիտի գծով ծախսեր	375	750
Անդամավճարների գծով ծախսեր	105	210
Գրասենյակային ծախսեր	76	159
Ներկայացուցչական ծախսեր	17	87
Ոչ նյութական ակտիվների պահպանման ծախսեր	724	1,397
Վարձակալության գծով ծախս	225	225
Գործուղման ծախսեր	559	559
Այլ ծախսեր	388	695
<b>Ընդամենը այլ ծախսեր</b>	<b>3,862</b>	<b>6,804</b>

## 8 Կանխիկ դրամական միջոցների համարժեքներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Թղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ-ում	640,489	1,282,450
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ (ծանոթ. 9)	-	8
<b>Ներառվում է դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում</b>	<b>640,489</b>	<b>1,282,458</b>
<b>Ընդամենը կանխիկ դրամական միջոցների համարժեքներ</b>	<b>640,489</b>	<b>1,282,450</b>

## 9 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Ժամկետային ավանդներ ՀՀ բանկերում	1,031,512	2,027,904
Բանկային հաշիվներ	-	8
<b>Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>1,031,512</b>	<b>2,027,912</b>

30.06.10թ. դրությամբ բանկերում տեղաբաշխված ավանդներում ներառված հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմում է 1,512 հազար դրամ:

## 10 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Վարկեր	5,998,071	2,389,765
<b>Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>	<b>5,998,071</b>	<b>2,389,765</b>

30.06.10թ. դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմում է 12,704 հազար դրամ:

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Վարկեր ՀՀ-ում գործող բանկերին	5,037,788	1,910,231
Վարկեր ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններին	947,579	473,618
Հաշվեգրված տոկոսներ	12,704	5,916
<b>Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ</b>	<b>5,998,071</b>	<b>2,389,765</b>

Կազմակերպությունն իրավունք ունի յուրաքանչյուր երեք տարին մեկ վերանայել իր կողմից բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրած վարկերի տոկոսադրույքները:

Ինչպես նշված է 20 ծանոթագրությունում, 30.06.10թ. դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը համընկնում է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային, իրացվելիության և տոկոսային ռիսկը բացահայտված է 21 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 19 ծանոթագրությունում:

## 11 Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր, անվանական արժեք	2,060,116	1,850,911
Ջեղչատուկոս	(37,599)	(98,327)
<b>Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ</b>	<b>2,022,517</b>	<b>1,752,584</b>

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազագույն և առավելագույն եկամտաբերությունը և մարմանը ժամկետները ներկայացվում են ստորև.

		30.06.10
	%	Մարման ժամկետ
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	8.208-9.000%	2010

## 12 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային և հաղորդակցման սարքավորումներ	Այլ հիմնական միջոցներ	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Ընդամենը
<b>ՍԿՁԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ</b>				
Սկզբնական արժեք 2010թ. հունվարի 01-ի դրությամբ	455	92	-	547
Ավելացում	396	96	209	701
<b>2010թ. հունիսի 30-ի դրությամբ</b>	<b>851</b>	<b>188</b>	<b>209</b>	<b>1248</b>
<b>ԿՈՒՏԱԿԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ</b>				
2010թ. հունվարի 01-ի դրությամբ	109	25	-	134
Հատկացումներ	241	51	1	293
<b>2010թ. մարտի 31-ի դրությամբ</b>	<b>350</b>	<b>76</b>	<b>1</b>	<b>427</b>
<b>Հաշվեկշռային արժեք 2010թ. մարտի 31-ի դրությամբ</b>	<b>501</b>	<b>112</b>	<b>208</b>	<b>821</b>

## 13 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ (տնային էջ)	Ընդամենը
<b>ՍԿՁԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ</b>			
Սկզբնական արժեք 2010թ. հունվարի 01-ի դրությամբ	4,542	-	4,542
Ավելացում	540	2,000	2,540
<b>2010թ. հունիսի 30-ի դրությամբ</b>	<b>5,082</b>	<b>2,000</b>	<b>7,082</b>

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ (տնային էջ)	Ընդամենը
<b>ՍԿՁԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ</b>			
<b>ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ</b>			
2010թ. հունվարի 01-ի դրությամբ	188	-	188
Հատկացումներ	250	17	267
<b>2010թ. հունիսի 30-ի դրությամբ</b>	<b>438</b>	<b>17</b>	<b>455</b>
<b>Հաշվեկշիռային արժեք 2010թ. մարտի 31-ի դրությամբ</b>	<b>4,644</b>	<b>1,983</b>	<b>6,627</b>

## 14 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Կանխավճարված աշխատավարձ	3,711	-
Կանխավճար հիմն. միջ. ձեռք բերման գծով	1,146	-
Այլ ակտիվներ	1,969	-
<b>Ընդամենը այլ պարտավորություններ</b>	<b>6,826</b>	<b>-</b>

## 15 Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	4,510,447	2,403,212
<b>Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ</b>	<b>4,510,447</b>	<b>2,403,212</b>

ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցները ներառում են վարկեր ստացված ՀՀ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում: Այս վարկերի վերահսկողությունն ու վարչարարությունը իրականացվում է Գերմանահայկական Հիմնադրամի կողմից: Վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ համաձայն գործող Գլխավոր վարկային պայմանագրի և Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Վերաֆինանսավորման կարգի: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամականաշրջանում Կազմակերպությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

## 16 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
---------------	----------	----------

Հազար ՀՀ դրամ	30.06.10	31.12.09
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	2,660	1,160
Այլ պարտավորություններ	1,660	-
<b>Ընդամենը այլ պարտավորություններ</b>	<b>3,720</b>	<b>1,160</b>

## 17 Սեփական կապիտալ

2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 5,000,000 հազ. դրամ: Համաձայն Կազմակերպության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 500,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2010թ. հունիսի 30 դրությամբ Կազմակերպության 100% բաժնետեր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը:

2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Կազմակերպության տարեկան և ընդհանուր ժողովներում:

Սույն թվականի մայիսի 28-ին տեղի ունեցավ Ընկերության տարեկան ժողովը, որի ընթացքում որոշվեց 2009թ. ֆինանսական շահույթը՝ 42,235,000 ՀՀ դրամ բաշխել հետևյալ կերպ՝ 2,111,750 ՀՀ դրամ հատկացնել գլխավոր պահուստին և 40,123,250 ՀՀ դրամ որպես չբաշխված շահույթ:

## 18 Պայմանական պարտավորություններ

### *Իրավական և հարկային պարտավորություններ*

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Գեկավարությունը համոզված է, որ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները: 30 հունիսի 2010թ. դրությամբ Կազմակերպության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Կազմակերպության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

## 19 Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Փոխկապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Կազմակերպության

կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Կազմակերպության վերջնական վերահսկող է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները ներառում են Կազմակերպության միակ բաժնետեր՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված Կազմակերպության ընթացիկ դրամային հաշվի վարումը, որը իրականացվում է շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Կազմակերպությունն իր գործունեության իրականացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկից ժամանակավոր անհատույց օգտագործման համար ստացել է գույք:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2010 Բաժնետեր
<b>Թղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ-ում</b>	
Մնացորդը հունվարի 01-ի դրությամբ	1,282,450
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ավելացում	4,701,507
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նվազում	(5,343,468)
<b>Մնացորդը մարտի 31 դրությամբ</b>	<b>640,489</b>

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2010
Աշխատավարձ և այլ վճարումներ	7,230
Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամին	623
<b>Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ</b>	<b>7,853</b>

## 20 Ֆինանսական գործիքների իրական արժեք

### Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները համապատասխանում են իրենց մնացորդային արժեքների հետ և ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	30 հունիսի 2010	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,031,512	1,031,512

Հազար ՀՀ դրամ

30 հունիսի 2010

	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,998,071	5,998,071
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,022,517	2,015,951

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	9,052,100	9,045,534
--	-----------	-----------

*Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների և պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ*

Մեկ ամիս և ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվները իրենից ներկայացնում են բանկերում տեղաբաշխված ավանդները և դրամական միջոցների մնացորդները:

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

*Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ*

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը համընկնում է դրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին, քանի որ ընթացիկ տոկոսադրույքները նոր գործիքների համար արտահայտում են նախկինում տրամադրված գործիքների տոկոսադրույքները:

*Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ*

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված պարտատոմսերի իրական արժեքի հաշվարկման համար հիմք է ընդունվում ՀՀ ԿԲ եկամտաբերության կորը, համաձայն որի 2010թ. հունիսի 30-ի դրությամբ 6 ամիս շրջանառության ժամկետ ունեցող պարտատոմսերի եկամտաբերությունները կազմել են 10.3000 տոկոս:

**21 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն**

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

	Ցպահանջ և լինչ 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 3 տարի	3 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդա- մենը
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>								
Դրամական միջոցների համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	640,489	-	-	<b>640,489</b>	-	-	-	<b>640,489</b>
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	931,354	-	100,158	<b>1,031,512</b>	-	-	-	<b>1,031,512</b>
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	27,647	35,817	182,710	<b>246,174</b>	698,145	5,053,909	<b>5,752,054</b>	<b>5,998,228</b>
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	663,300	639,441	719,776	<b>2,022,517</b>	-	-	-	<b>2,022,517</b>
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>2,262,790</b>	<b>675,258</b>	<b>1,002,644</b>	<b>3,940,692</b>	<b>698,145</b>	<b>5,053,909</b>	<b>5,752,054</b>	<b>9,692,746</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>								
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	-	17,234	<b>17,234</b>	641,888	3,851,326	<b>4,493,214</b>	<b>4,510,448</b>
<b>ԸՆԴԱՄԵՆՆԸ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>17,234</b>	<b>17,234</b>	<b>641,888</b>	<b>3,851,326</b>	<b>4,493,214</b>	<b>4,510,448</b>
<b>Զուտ Դիրք</b>	<b>2,262,790</b>	<b>675,258</b>	<b>985,410</b>	<b>3,923,458</b>	<b>56,257</b>	<b>1,202,583</b>	<b>1,258,840</b>	<b>5,182,298</b>
<b>Կուտակված ճեղքվածք</b>	<b>2,262,790</b>	<b>2,938,048</b>	<b>3,923,458</b>		<b>3,979,715</b>	<b>5,182,298</b>		

## 22 Ռիսկի կառավարում

Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Կազմակերպության Ղեկավարության կողմից՝ ըստ Կազմակերպության Ընդհանուր ժողովի հաստատած վարկային քաղաքականության և ներքին կանոնակարգերի: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և միջոցներ է ձեռնարկում զսպելու ֆինանսական ռիսկերը:

Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքների, տոկոսադրույքների և այլ գնային ռիսկերը:

## 22.1 Վարկային ռիսկ

Կազմակերպության գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Կազմակերպության կորուստներ կարող է պատճառել: Վարկային ռիսկը Կազմակերպության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկվում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Կազմակերպության ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Կազմակերպության վարկերի հսկողության բաժնի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են կազմակերպության Ղեկավարությանը:

### 21.1.1 Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց երաշխիքի կամ այլ վարկային ապահովման

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության՝ վարկային ռիսկի ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու: Հաշվեկշռային ակտիվների համար վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2010թ. հունիսի 30-ի դրությամբ
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	1,031,512
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	11	5,998,071
Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	12	2,022,517
<b>Ընդամենը վարկային ռիսկ</b>		<b>9,052,100</b>

### 21.1.2 Վարկային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

#### Աշխարհագրական սեզմենտներ

2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության վարկային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացած են ՀՀ-ում:

#### Արդյունաբերության ճյուղեր

2010թ. հունիսի 31-ի դրությամբ Կազմակերպության վարկային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացած են Ֆինանսական կազմակերպություններում:

### **21.1.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն**

Կազմակերպությունը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով:

Կազմակերպությունը իր վարկային ռիսկը զսպելու նպատակով կարող է իր հետ համագործակցող հաստատությունների համար սահմանել վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր: Յուրաքանչյուր հաստատության համար կարող է սահմանվել առանձին սահմանաչափ: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Կազմակերպությունը կարող է սահմանել սահմանաչափեր նաև վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի վրա ըստ դրանց տրամադրման տարածաշրջանի, վարկառուների առանձին խմբերի և այլ հատկանիշների:

Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի 90 և ավել օր ժամկետանց դառնալու դեպքում հաստատությունը պարտավոր է այդ վարկի գումարի չափով մարել Կազմակերպության կողմից ստացված վարկի գումարը:

Կազմակերպությունը վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նկատմամբ հսկողությունը իրականացնում է համագործակցող հաստատությունների կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացվող հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև Կազմակերպության համապատասխան աշխատակցի տեղերում վարկերի ստուգման միջոցով:

#### ***Գրավ***

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց ապահովում վերցնելը: Կազմակերպությունը որպես վարկերի և փոխատվությունների համար ապահովման հիմնական միջոց բոլոր վարկառուների հետ կնքում է պահանջի իրավունքի զիջման (ցեսիայի) պայմանագիր, համաձայն որի Կազմակերպությունն իրավունք է ստանում հարկ եղած դեպքում օգտվել Կազմակերպության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պայմանագրերից բխող վարկատուի և գրավառուի բոլոր իրավունքներից:

30.06.2010 թվականի դրությամբ Կազմակերպության կողմից տրամադրված վարկերը ամբողջությամբ ապահովված են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերով:

Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

#### ***Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ***

2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չունի Վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ:

### **21.1.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն**

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված ղժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները,

պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Կազմակերպությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

#### *Արժեզրկման անհատական գնահատում*

Կազմակերպությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հատույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

#### *Արժեզրկման խմբային գնահատում*

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության գնահատմամբ վարկային պորտֆելը չունի անհատական կամ խմբային արժեզրկման որևէ հատկանիշներ: Հետևաբար, կազմակերպությունը չի ստեղծել վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստ:

## **22.2 Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվեն այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Կազմակերպությունը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: 2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել առևտրային պորտֆել: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: 2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի զգալի կենտրոնացումներ:

## **21.2.2 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային**

### *Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Կազմակերպության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: 2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

### *Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: 2010թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

### **22.3 Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը կապված է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Կազմակերպությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Կազմակերպության հետ մասնավորապես:

Կազմակերպության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների:

### **23 Կապիտալի համարժեքություն**

2005թ. հուլիսի 1-ից սկսած ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է նորմատիվային կապիտալի նվազագույն չափ՝ 150,000 հազար դրամ գումարով:

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Կազմակերպության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Կազմակերպությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ:

Ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները: